



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

71  
- 61

## БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться

ею.

25 SEP 2006

831.71  
L-61

Ար.

Պ. Կ. ՂԱՎԵՆԻԿՈ-ԿՈՆԻԶ

313 NOV 2010

17080

891.7<sup>b</sup>  
„ԸՆԴՈՒԽՆԵԼՈՒԹԵԱՆ ՕՐԸ“

ՎՈԴԲԱԼԻ ՄԵԿ ԳՈՐԾԱՌԱՋՈՒԹԵԱՄՐ

Թարգմանեց

ԳԷՈՐԳ ՄԵԼԻքԵԱՆՑ:

3937  
13259

3357



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՀՈՒ  
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐՏԳԱՏԻՎ» ՏՊԱՐԱՆ  
1904.


1/304.

Ն Ա Խ Ե Բ  
Ի Մ Ը Կ Կ Բ

Дозвол. ценз. С.-Петербургъ, 7 Июня 1904 г.

ԱԱՐԳԻՍ ՍԱՀՐԱՏԵԱՆԻՆ:

Թարգմանիչ



“Пушкинская Скоропечатня”, Лештуковъ, 4.

02.05.2013

11.363

## „ԸՆԴՈՒԽՆԵԼՈՒԹԵԱՆ ՕՐԸ“

ՊԱՎԵԼ ԻՎԱՆԻՉ ՎԱՐՈՒԽԻՆԳԵԱՆ—ապահար-  
զանական գործերի փաստաբան, 35  
տարեկան երիտասարդ:

ԵՐԱԿԱՆ ԿՐԱԿԵՐԱՆ — Կալւածաթիրուհի 50  
տարեկան. տաք բնաւորութեան տէր  
կին. հազնւած է անճաշակ, գոյն-  
զգոյն:

ԱՐՑԵՄ ԻՎԱՆԻՉ - ԿԱԿԱԶԵԱՆ - ԹՈԹՈՎԱ-  
ԽՈՍ, ՆԻԿԱՐ ԳԵԺԲՈՎ, ԾԱԳԵՐՐ ԹԱ-  
ՓՈՒԱԺ, ՀԱԳՈՒՍԹՐ ԱՆՇԱՂԱԿ:

ԻՎԱՆ ԻՎԱՆԻՉ ԱՐՄԻՒԵԱՆ— սպալ, կալ-  
ւածատէր Յ5. տարեկան. ազգու և  
աշխոյժ բնաւորութիւն ունեցող. գե-  
ղեցիկ է:



3390  
40

ՄՅՐԵԱ. ՍԵՄԵՆՕՎՆԱ, — սրա կիսր, 17 տա-  
րեկան:  
ԳՐԻԳՈՐ ԿՈՇԻԿԵԱՆ — Վարունդեանի սպա-  
սաւոր:

Գործողութիւնը կատարում է Վարունդեանի տանը:  
Փաստաբանի առանձնասենեակը: Զախ կողմը դրած է մի  
գրասեղան, աջ կողմում պատուհանի մօտ — բազմոց: Մէջ-  
տնդում և երկու կողքում դռներ: Սենեակի գարդարանքը  
բաւականին ծոխ է:



### ՏԵՍԻԼ 1.

#### ՎԱՐՈՒԽԳԵԱՆ ԵՒ ԳՐԻԳՈՐ.

ՎԱՐՈՒԽԳԵԱՆ: (Գրասեղանի առաջը նստած թշո-  
թերն է կարգի բերում):

Աստւած իմ, ինչպէս գլուխս ցաւում է  
երեկւան լնժրիքից:

Փաստաբանը չպէտք է, ախր, այդպէս  
երկար ժամանակ հիւր քարշ գայ: Բայց ինձ  
տեղն է: Մի բան այստեղ ինձանում կատար-  
ւում է իհ-է... հէ... Ես այսօր պէտք է տիկին  
Պետրոսեանի գործը վերջացնեի: Տեսէք, բանը  
ինչումն է: Մարդը կնան է սիրում, կինը —  
մարդուն. իսկ զոքանչը վճռել է անպատճառ  
բաժանել նրանց:

Օխ, էղ զոքանչները...: Պատճառներ ա-  
պահարզանի համար գեռ չկան, բայց տիկնոչ  
լնկերուհին խոստացել է հնարել: Ի՞նչ հար-  
կաւոր է նրա լնկերուհին այդ գործում, ես  
չեմ հասկանում: Ես նրան մի նամակ գրեցի  
հետեւալ բովանդակութեամբ՝ որ եթէ նա

այսօր ժամը երեքին չի դալ և նիշտ տեղե-  
կութիւններ չի տալ ինձ, ես նրանց զորք տա-  
նելուց բոլորովին հրաժարւում եմ:

ԳՐԻԳՈՐ: (Աշեց մանելով) Բնիունարանում  
մարդիկ կան:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ո՞վքեր են:

ԳՐԻԳՈՐ: Մի պզտիկ, մեղքի կտոր պարոն  
է, շատ գժւարութեամբ է խօսում, մեծ մասը  
մատները ու պոջները ծոմոելով է հասկաց-  
նում: Էն միւսն էլ մի պառաւ տիկին է. նա  
անդադար հայնոլում ու ժամացոյցին է նա-  
յում:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Դէ՛ դնա, կանչի՛ր. մկ է  
այնտեղ առաջինը... հերթով: (Գրիգորը դնում է մէջ-  
տեղի դանից, վարունքանը մնակ) Վերջին ժամանակ-  
ները զործերն էլ սակաւացել են: Կանայք  
բոլորովին փոխւել են. սկսել են քիչ դաւաճա-  
նել իրանց ամուսիններին: Եթէ ալդպէս կ'շա-  
րունակւի, ստիպւած կլինեմ թողնել արհեստու:

ՏԵՍԻԼ 2.

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ, ԿԱԿԱԶԵԱՆ յետոյ ԳՐԻԳՈՐ:

ԿԱԿԱԶԵԱՆ: (Մանում է մշտեղի դանից, կօմիա-  
պէս դլուխ է խնարհում)

Բա... բա... բարե ձեզ, թու... թութ...  
թով տւեկ նե-երկայանալ...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Կողմէ) Կակազ է: (Նրան)՝  
Շատ ուրախ եմ, նստեցէք, խնդրեմ:  
ՎԱԿԱԶԵԱՆ: Ա-արտեմ իվա-անիչ կը...  
կը... կա-ակազեան:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Կողմէ) Իրան յարմար աղ-  
դանուն է: (Նրան)՝ Շատ ուրախ եմ, ինչով կա-  
րող եմ ձեզ օգտակար լինել:

ՎԱԿԱԶԵԱՆ: Պէ-էտք է ձեզ ասեմ, որ  
ե-ես, լինելով բո... բո... բո-ոլոր ելլօրներիցս  
ամենափոքրը, զա-անազան պատճառ-առնելով,  
սրոնց մասին ե-ես ձեզ յետոյ կը պատճեմ,  
ես համարեա միշտ զիւ-զիւղումն եմ ապրել...  
ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Զէք կարող արդեօք  
դուք...

ՎԱԿԱԶԵԱՆ: (Զենները թափ տալով) Թութ...  
թով տւե՛ք... ես բո-ոլոր ժամամանակը ապրել  
եմ զիւ-զիւղումը, ալսինքն, նիշտ ասած, ոչ  
թէ զիւ-զիւղումը...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ներողութիւն, ես ձեզ  
լոդիատում եմ...

ՎԱԿԱԶԵԱՆ: (Կիսով չափ վեր է կենում տեղից և  
ձեռքերը սաստիկ թափահարում է) Խը... խնդրում եմ

մի՛ խանգարէք... ես չղալին մարդ եմ, ~~ա-ալու~~  
ինձ համար շշատ վնաս-աս է: Այդպիս ե-ես ձեզ  
պէտք է ասեմ, որ բոլոր ժամանակը ապրել  
եմ դիւ... զիւղումը...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Հասկանում եմ, բոլոր  
ժամանակը զիւղումն էք ապրել:

ԿԱԿԱՋԵԱՆ: (գեր թռչելով) Խը... խնդրում  
եմ մի խանգարէք, ես սաստիկ չղալին մարդ  
եմ և... ի՞նչ էի ասում: Հա. ես մմիշտ ապրել եմ  
դիւ... զիւղումը... (Քիթն է սրբում:)

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Կողմ) Հէնց այն է քո  
տեղը: Այդ ի՞նչ լիմարի զլուխն է:

ԿԱԿԱՋԵԱՆ: Դու-ուք բա՞-ան սսացիք:  
ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ոչի՞նչ, կատարելապէս  
ոչի՞նչ:

ԿԱԿԱՋԵԱՆ: Հա. էին էի ասում... Ո...  
ո... որովհետեւ բո-ոլոր ժամանակը անցրել եմ  
դիւ... զիւղումը...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Տեղից վեր թռչելով) Դար-  
ձեա՞լ զիւղի մասին:

ԿԱԿԱՋԵԱՆ: (Գնալով վարունգեանի յետելու) Խ...  
խնդրում եմ, ինձ մի խանգարէք, ե-ես  
սաստիկ չղալին եմ...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Սատանան տանի ձեղ էլ,  
ձեր ջղերն էլ. կարճ կտրեցէք, ի՞նչ էք ուզում. Ես  
ժամանակ չունեմ երկար սպասելու, իմ ամեն մի  
ըոպէն հաշւածէ: Դուք աւելիլաւ կանէք, որ եթէ  
ձեր ասելիքը մի թղթի վերայ զրէք: Ինձ այնտեղ  
ուրիշ կլիմանաներ են սպասում, իսկ զուք խրւել  
էք ձեր «զիւ... զիւղում» և ոչ մի կերպ չէք  
կարողանում զուք զալ: Ես հէնց շարունակ  
ձեղանից լսում եմ «զիւ-զիւղում» հա՞ «զիւ-  
զիւղում»... և ուրիշ ոչինչ...

ԿԱԿԱՋԵԱՆ: Թու... թութ... թով տուէք  
ձեղ ասել, որ ե-ես հի-իւանդ մարդ եմ, իսկ  
դուք վրաս զո-ոոում էք: Իմ ջղերը... զլուխս...  
իսկ դուք... դուք... (Թռուացած ընկնում է բազկաթուի  
վրայ):

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Այդ էր պակաս: Ներե-  
ցէք, 'ի սէր Աստուծոյ: (Կողմ) Գրողը տանի քեզ  
էլ, քո զիւղիդ էլ: (Զանգահարում է. գալիս է գրեգորը):  
Տարէք այս պարոնին իմ ննջարանըս, թող այն-  
տեղ հանգստանայ: (Գրեգորը տանում է կակաղեանին,  
որը կամենում է մի բան ասել բայց չէ կարողանում):

ՏԵՍԻԼ. 3.

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ ԵՒ ԾԱՂԻԿ ԿՐԱԿԵԱՆ:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: (ՄԵՆԱԿ) Ա՛յ քեզ բաւա-  
կանութիւն—ունենալ այդախոփ կղիւնս: Այն  
որ կինն է լիմարացել, որ վճռել է մարդու  
գնալ այդպիսի խեղկատակին:

ԿՐԱԿԵԱՆ: (Ագմուկով ներս է ճանում:) Ասացէք,  
ինդրեմ, գուշը էք փաստաբանը:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Այս, ես եմ:

ԿՐԱԿԵԱՆ: Երկար պէտք է սպասեմ ես  
իմ հերթին: Համարեա մի ամբողջ ժամ է, որ  
ես սպասում եմ: Ես ժամանակ չունեմ:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Դուք լաւ ժամանակին  
էք շնորհ բերել. նստեցէք, խնդրեմ:

ԿՐԱԿԵԱՆ: Շնորհակալութիւն: Դուք  
իշան Պավլօվիչ էք:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Պավել իշանիչ:

ԿՐԱԿԵԱՆ: Պազարեան:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Վարունգեան:

ԿՐԱԿԵԱՆ: Շատ ուրախ եմ: Ես լիշում  
եմ, որ մի ինչ որ բանջարեղին է, բայց չեմ  
կարողանում մտաբերել վարունգ է, թէ կա-

զամբ: Յիշողութիւնս սաստիկ վատացել է:  
Ֆու, ալխտեղ ինչպէս շոգ է: Զի՞ կարելի պա-  
տուհանը բաց անել: (Վարունգեանը բաց է անում: Կրա-  
կեանը հանում է իւր ահագին բիդեկելից զանազան բաներ՝  
այսուեղ կան և կարկանդակ, և շիշեր, և գուլպաներ, և թաշ-  
կինակներ, և զանազան կապոցներ և ազնն վերջապէս հանում  
է մի սրւակ, որի միջի հեղուկով թաթախում է թաշկինակը և  
դրանով որբում է ճակատն ու ծամերը: Յետայ նոյն կարգով  
տեղակում է ը բիդեկելով դնում է վարունգեանի առաջը դրած  
սեղանի վրայ): Ես, ինչպէս անենում էք, եկել եմ  
իմ աղջկաս գործի մասին: Պէտք է ձեղ ասեմ,  
որ ես ութը աղջիկ ունեմ, և բոլորն էլ ինձ  
պէս գեղեցկուհիներ են: Նրանց մարդու տալ ես  
չեմ ցանկանում, որովհետեւ բոլոր աղամարդիկ  
սրիկաներ են:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Շնորհակալութիւն:

ԿՐԱԿԵԱՆ: Զարժէ: Ա՛յ հիմա ես ինքս  
չեմ հասկանում, թէ ի՞նչպէս այդ եղաւ: Իմ  
փոքր աղջիկս, Սօնեան, մարդու գնաց մի սպայ  
կալւածատէրի: Նրա մարդի, ես ձեղ ասեմ,  
սիրելի... Ստեփան Գրիգորիչ... կարծեմ:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Պավել իշանիչ:

ԿՐԱԿԵԱՆ: Այս, այս, Պաւել իշանիչ,  
ը... ը... բողիկեան:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Վարունգեան, տիկին,  
Վարունգեան:

ԿՐԱԿԵԱՆ: Ներեցէք, սիրելի Պաւել ի-  
վանիչ, ներեցէք: Յիշում եմ, որ ուտելու բան  
է, բայց ի՞նչ բան է—չեմ կարողանում մտա-  
բերել: Հա պէտք է ասեմ, որ Սօնիչկիս մար-  
դուն ես վաղուց ի վեր տանել չէի կարողա-  
նում: Բայց նրան ես մարդու տուի տէրտէրա-  
կինի չըլու, որովհետև նա հէնց պարձենում  
էր, թէ իրա աղջիկը առանց օժիափ էլ կեր-  
թալ նրան: Դէ, այստեղ իմս ինձ հաստաւ: Ֆոււ,  
այստեղ ինչպէս փչում է. չի կարելի պատու-  
հանը փակել: (Վարունգեանը փակում է ուղար գործողու-  
թիւնը բիդկելի հետ Կրակեանը հանում է թաշկինակը, և  
դրանով ծածկում է:)

Այդ ի՞նչպէս կլինի, ասում եմ, ես իմ  
ուժը պլազման աղջիկներովս առանց փեսանե-  
րի մնամ, նա իրա տափակաքիթ կատ' ին հա-  
րսաթի՞ն մարդու տափ: Զէ, ասում եմ, սպա-  
սիր դու: Եւ մի յաջող օր ես բանը բերեցի  
այնպէս սարքեցի որ կալւածատէրը Սօնիչկիս  
առաջարկութիւն արեց: Իսկ բանի որ դու փե-  
սաս ես, էլ իմ ծեռքիցս չես պրճնի:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Բայց ծեր աղջիկը սի-  
րում է նրան:

ԿՐԱԿԵԱՆ: Յաւնել հէնց այդ է, որ սի-  
րում է, էլի՛: Այդ գեռ ոչինչ: Բայց մեղանում  
կալ մի կալւածատիրուհի: Մի երեւելի կին

էլ չէ, կլինի այդպէս 45 տարեկան: Այդ կինը  
կատուի նման սիրահարւած է պրիստաւի վե-  
րաց: Իսկ պրիստաւը, ես ծեղ ասեմ, շարունակ  
ընկած է իմ մեծ աղջկաս յետևից:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ներողութիւն: Կարծեմ  
պրիստաւը ծեր Սօնիչկայի գործի հետ կապ  
չունի:

ԿՐԱԿԵԱՆ: (Յանդիման) Սօֆեա Զախարօվ-  
նա, և ոչ թէ Սօնիչկա... Հաւ պէտք է ժեղ  
ասեմ, սիրելի նիկոլայ իվանիչ... Այդպէս է,  
կարծեմ... Մեխեմն:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Զայրացած) Վարունգեան,  
ի սէր Սատուժոյ, Վարունգեան:

ԿՐԱԿԵԱՆ: Դէ արի ու լիշեր: Պարզ լի-  
շում եմ, որ դուք բանջարեղէն էք, բայց ո՞ր  
աեսակից—այդ չեմ լիշում:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Լսեցէք ես ծեղ համար  
ի՞նչ բանջարեղէն եմ. ի սէր Սատուժոյ ինձ  
բանջարեղէն մի ասէք:

ԿՐԱԿԵԱՆ: Շատ լաւ, ինչպէս կամենաք:  
Միայն Վարունգեն խորոված կամ սուփ ասել  
չի կարելի: Ֆոււ, ինչպէս շոդ է, խնդրեմ պա-  
տուհանը բաց անէք, եթէ կարելի է:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Դարձեալ բաց անել:  
ԿՐԱԿԵԱՆ: Ի հարկ է բաց արէք, խօ  
չեմ ասում, որ կոտրէք: (Եսան խաղը բիդկելի հետու)

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Արագ վեր է կենում և բաց առում) Համեցէք: ԿՐԱԿԵԱՆ: Պահ: Պէտք է ծեղ ասեմ, որ ալդ կալւածատիրուհին չաղ, թափթփւած ձըսերով մի կին է. կինի ծանրութեամբ եօթը փութ, եթէ ոչ աւել: Շատ ժլատ կին է, մի հնացած կառք էլ ունի: Սա մի անձրեալին օր, չգիտեմ ինչու, գէպի մեր տան կողին էր գալիս. եւ ահա կէս ճանապարհին կառքի տակը կոտրում և բաժանում է կառքից, իսկ բացւածքից սրա ուսներն էլ զուրս են կախում... Կառապանը բանից խաբարութիւն չունի, միայն ծիերին է զամշիլամիշ անում, որ շուտ տեղ հասնի, այն ինչ կալւածատիրուհին իւր գրութիւնից աղատվել չի կարողանում. ինքը կառքի մէջն է, իսկ ուսները ցեխի մէջ են թրե գալիս: Շրշազգեսար նոյնպէս կառքի մէջն է հաւաքւել, այնպէս, որ միայն մերկ ուներն են զրսում երեսում: Ժողովուրդը տեսնում է, բան չի հասկանում:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Լսեցէք, տիկին. ինձ աձենեին հետաքրքիր չի իմանալ, թէ ինչ զրութեան մէջ է եղել կալւածատիրուհին իւր կառքի մէջ... ինզրում եմ ծեղ պատասխանել հարցիս. մեր աղջիկը ցանկանում է բաժանել:

ԿՐԱԿԵԱՆ: Ոչ: ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Նշանակում է մարդն է ցանկանում: ԿՐԱԿԵԱՆ: Ո՛չ: ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Հապա ողի է ապահարզան պահանջողը: ԿՐԱԿԵԱՆ: Ե՛ս: ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Դժուք: Դժուք ինչ կապ ունիք այդ զորմի հետ: ԿՐԱԿԵԱՆ: Ինչպէս թէ ինչ կապ: Ես մայր եմ... ես եմ համոզել Սօնիչիս, որ նա համաձայնւի ապահարզան տալ: Ես նրան ուղղակի ասացի, որ եթէ նրա մարդը նրան հիմա չի իւրաբում, մի ենոյն է վերչը կը իւրըի: Տղամարդիկ առանց այդ չեն կարող: (Դռներում երեսում է Կակաղեանը)

3390

ՏԵՍԻԼ 4.

ՆՈՅՆՔ ԵԻ ԿԱԿԱԶԵԱՆ: ԿԱԿԱԶԵԱՆ: Ե-Ես մի փո-ոքը հանդսացայ:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Բարեհանցէք սպասել, ես զբազւած եմ: ԿԱԿԱԶԵԱՆ: Ե-Ես միայն մի քա-անի խոսք...



ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: ՅԵՄՈՒՅ, ՅԵՄՈՒՅ...

ԿՐԱԿԵԱՆ: ԼՍԵԳԷՔ, ԳՈւք տեսնում էք,

որ պարոն ԶՃԵՐՈՒԿԵԱՆՐ տիկնոշ հետ խօսակցում է դործի մասին, իսկ գուք խանգարում էք:

ԿԱՐԱՋԵԱՆ: ՆԵ-ԵՐԵԳԷՔ, ևս զնում եմ:

(ԳՀԱՌՈՒՄ Է ԺԱՄԱ)

ԿՐԱԿԵԱՆ: ՓՀՈՒՄ Է ՍԱՍՏԻԿ, ՓԱԿԵԳԷՇՐ  
ԱՊԱՏՈՒՀԱՆԲ: (Խաղ ՌԻԴՎԿԻՌ Անու:)

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: ՏԷՇ Ա.Ա.ՍՏԱԽԱԾ, ևս ձեզ  
համար պատուհաններ բանալու և փակելու  
մեքենան եմ, ի՞նչ է: Ես ձեղ համար պատու-  
հանը էլ չեմ բաց անի: (Փակում է. Կողմ: ) Նա մը-  
տադիր է, երեկի դարձեալ մի երեք ժամ նըս-  
տել:

ԿՐԱԿԵԱՆ: Հա. Էն էի ասում: Երբ Սօ-  
նիկաս համագույնւեցաւ ապահարզանի, իսկոյն  
իւր ընկերուհուն մի նամակ զրեց, որ նա զնա  
փաստաբանի մօտ: Գործը սկսւած է, բայց  
պատճառներ ապահարզանի համար մենք գեռ  
չենք դաել և չենք էլ կարողանում մտածել:  
Բաւական չէ ալդ, աղջկաս ամուսինը համո-  
զում է նրան թողնել ալդ «Կօմէդիան»... ի՞նչ-  
ովէս էք հաւանում, «Կօմէդիան»...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Երեկի նա շատ աղնիւ  
մարդ է: Շատ լաւ, ով է նրանցից մեղաւորը,  
ալսինքն, ուրիշ խօսքով, նրանցից որն է վերց-

ՆՈՒՄ իր վրայ մեղը, մեր աղջիկը, թէ նրա  
ամուսինը:

ԿՐԱԿԵԱՆ: Պարոն, ես թոյլ չեմ տալիս  
ձեղ իմ աղջկայ մասին այսպիսի գաղափար  
կազմելու:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ա՛, ուրեմն ամուսինը...  
Նա համաձայն է.

ԿՐԱԿԵԱՆ: Ո՛չ, համաձայն չէ, բայց պէտք  
է նրան ստիպել, որ համաձայնւի:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Իսկ եթէ նա մեղաւոր չէ:

ԿՐԱԿԵԱՆ: Բաս էլ ինչու եմ ես այս տեղ  
եկել: Ի՞չկա գուք անհասկացող էք: Ես ձեզ,  
ամբողջ երկու ժամ է, բոլորը մանրամասն պատ-  
ճում եմ, իսկ գուք աղլամազ էք և ոչինչ չէք  
հասկանում: Պէտք է, ասում եմ, մի այնպիսի  
օրէնք դանել, որի զօրութեամբ թրան, թէւ  
անմեղին, կարողանալիք մեղաւոր հաստատել:

ԿԱՐԱՋԵԱՆ: (Խաղանուակ) թու... թութ...  
թույլ տւէք ինձ ա... ա...

ԿՐԱԿԵԱՆ: Դարձեալ եկաւ ալդ պարո-  
նը: ԼՍԵԳԷՔ, ի՞նչպէս է ձեր...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Խաղան) Պավել իվանիչ:

ԿՐԱԿԵԱՆ: Պավել իվանիչ, ասացէք նր-  
ան, որ չխանգարէ, թէ չէ նա ինձ համբե-  
րութիւնիցո կհանէ:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Կակազին:) Ես ձեղ տսա-  
ցի, որ կը կանչեմ:  
ԿԱԿԱԶԵԱՆ: Ե-Ես եկել եմ...  
ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Տեսնում եմ, որ հկել էք:  
ԿԱԿԱԶԵԱՆ: Ե-Ես թ... թղթի եմ եկել,  
որ բո-բոլորը մանրամասն դրեմ...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Ուրախացած:) Ա-, այդ գե-  
ղեցիկ է: Ահա ձեղ թուղթ, գնացէ՛ք, և զրէք:  
(Տալիս է թուղթը՝ կակազեանը դնում է ձախ:) Ասոււած  
իմ, կատարեալ տաճշանք է:

ԿՐԱԿԵԱՆ: Հա. էն էի տսում: Նա պէտք  
է բոլոր օրէնքներով ու յօդւածներով մեղաղը-  
ւի: Ես նրան, այդ գարշելիին կը սովորեցնեմ,  
թէ ինչպէս պէտք է վերաբերւի գէսպի իւր  
կնոջ մալրը: Առաջինը՝ նա ինձ չի ուղում մալ-  
րիկ անւանել, այլ բոլորի մօտ զոքանչ է կան-  
չում: Ասացէք խնդրեմ, մի՛թէ գա վիրաւորա-  
կան չէ, հ՞ր՝ վիրաւորական է, թէ՛ ոչ, ես ձեղ  
հարցնում եմ:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ես ալս տեղ ոչ մի վի-  
րաւորանք չեմ տեսնում:

ԿՐԱԿԵԱՆ: Իսկ ես ձեղ տսում եմ, որ  
գա մեծ վիրաւորանք է:

ԿԱԿԱԶԵԱՆ: (Նորից մանելով) Ներողութիւն...  
գ... գ...

ԿՐԱԿԵԱՆ: Էլի եկաւ:  
ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Հեռացէ՛ք, թժէ ոչ, ես  
ինձ համար երաշխաւոր չեմ լինում:  
ԿԱԿԱԶԵԱՆ: Գ-գրիչ չունեմ, գ... գ...  
գրիչ տւէ՛ք:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ահա ձեղ գրիչ, միայն  
գնացէ՛ք: (Բոլորում է կակազեանին:) Վ-

ԿՐԱԿԵԱՆ: Այդ սարսափելի է: Նա չի  
թողնում մեղ գործի մասին խօսելու: Արիւնս  
վկիս էր խփել: (Վերջնում է սփդիկուլը. առջ խաղը.)  
Խնդրում եմ, պատուհանը բաց արէ՛ք:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ի՞նչ, գարծեալ պատու-  
հանը... Չեմ բաց անի: Ես ձեղ համար պատու-  
հանի գործիք չեմ: Դուք երբեմն մըսում էք,  
երբեմն շոգում էք...

ԿՐԱԿԵԱՆ: Պատուհանը. շոգ է: Ես խեղդ-  
ւում եմ: Հասէ՛ք:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Վաղելով գեղի պատուհանը)  
Բհ՛ը, սառէ՛ք, մըսէ՛ք: Ել ամենկին չեմ փա-  
կի: (Փոքր միջոց) Գիտէ՛ք ինչ է, աիկին, ապա-  
հարզանի միջոցին առաջին պայմանը...

ԿՐԱԿԵԱՆ: Փողը: Այդ ես ինքս զիտեմ,  
սիրելիդ եմ, Զախար Իվանիչ:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Զախար Իվանիչ չի: ալ  
Պավել Իվանիչ: (Կողման) Ա-իս, այդ ի՞նչ անտա-

նելի օր լուսացաւ: (Նրան) Ա՛յ, առէ՛ք իմ այ-  
ցետոմար. Երբոր կրկամենաք իմ անունը տալ,  
կարդացէք դաւ Տեսէ՛ք, ձեր առաջն եմ զնում:

ԿՐԱԿԵԱՆ: (Կարդում է) Երդւեալ հաւա-  
տարմատար Պավել Խվանիչ Վարունգեան: Դէ,  
ալ, համեցէ՛ք... լիշումն եմ, որ խորւածի հետ  
են ուտում բայց թէ ի՞նչ է չեմ մտաբերում:

(Դնում է այցետոմար սեղանի վերայ) )

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Փաստարան — և յան-  
կարծ խորւածի հետ ուտեն:

ԿՐԱԿԵԱՆ: (Դնում է բագկեւլը այցետոմար վրայ) )  
փողը ես չեմ խնայիլ, բայց նրան, անպիտա-  
նին, կրսովորեցնեմ: Ամենքին լաւ է վերաբեր-  
ւում, միայն ինձ չի ուզում յարգել: Իսկ ինչ  
վերաբերում է, որ նա սիրունի է պահում, էդ  
մասին ես դրասակ՝ դամ, ինչից ուզում էք:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Բայց դուք ապացոյցներ  
չունէ՛ք:

ԿՐԱԿԵԱՆ: Ա՛յ, հէնց բանն էլ նրանումն  
է, որ ապացոյցներ չ'կան: Եթէ ես ապացոյց-  
ներ ունենալի, սիրելի... սիրելի... (Սլաքամբը ու-  
րեւ այցետոմար է վերցնում) Վառվառա Սեմենովնա...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Տեղից վեր թռչելով) Ի՞նչ  
Վառվառա էք ասում: Դուք իմ այցետոմարին  
չէք նայում: Ա՛յ, իմս... ալ...: Լսեցէ՛ք, տիկին,

հիմա ես ժամանակ չունեմ, ուրիշ անդամ կը-  
գաք:

ԿՐԱԿԵԱՆ: Ինչպէս թէ ուրիշ անդամ:  
Կարձես ես աղատ ժամանակ ունեմ: Դուք  
ինչպէս որ զործը յանձն էք առել տանել, այն-  
պէս էլ տարեք մինչև վերջը, եթէ ոչ, ես մի  
ուրիշ ստախօսի մօտ էլ կերթամ: Զեղ պէս  
բանչարեղէններ այստեղ շատ կան:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Տիկին, խնդրում եմ ձեզ  
այստեղից հեռանալ և չհամարձակւել ինձ որ-  
տախօս կամ բանջարեղէն անւանել:

ԿՐԱԿԵԱՆ: Ի՞նչ: Ինձ լուրս էք անում:  
Տես, հոգիս, ինձ զուրց անողը իրա մօրից չի  
ծնւել: Ես ինքս մի ուրիշի այնպէս զուրս կա-  
նեմ, որ նա դռնից զուրս զալու փոխարէն,  
պատունանից կ'փախչի: Զեղ պէսերին շատ ենք  
տեսել: Ես ինքս երեք մարդ եմ ունեցել և նր-  
անցից ոչ մէկը չի համարձակւել վրաս ծուռ  
աչքով նայելու, իսկ ալստեղ յանկարծ փող էլ  
տամ և գարձեալ չթողնեն խօսելու:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Դուրս կորէ՛ք:

ԿՐԱԿԵԱՆ: Հօք, դուրս: Ա՛յ չդրու չեմ  
դնալ: (Կատառ է)

ԿԱԿԱՋԵԱՆ: (Մասելով) Թու... թու...  
թու...

ՎԱՐՈՒԽԵԱՆԳԵԱՆ: Սո կին չէ, այլ կատարեալ սատանայ է:

ԿՐԱԿԵԱՆ: Սատանայ: Ո՞վ է սատանան:  
Դուք համարծակւում էք ինձ սատանայ ասել:  
Ես ձեզ վրայատ կը բանամ, կ'զանդատեմ:  
(Բանում է Կակաղեանի ձեռքից:) Պարօն, դուք կ'վկայ-  
էք, թէ ինչպէս այդ բանչարեղէնը ինձ վիրա-  
ւորեց: (Վարունգեանին) Ես ձեզ այդ չեմ ներիլ:

ԿԱԿԱՋԵԱՆ: Թռու... թռու... թռութ...

ԿՐԱԿԵԱՆ: Առանց «Թռու... թռու... թռու...»-ի:  
Այդ լեաոյ կանես: Իսկ հիմա դուք պէտք է  
զրէք ինձ համար ձեր հասցէն և ասէք, ինչ է  
ձեր ազգանունը: Դէ՛, շնորհ: (Կակաղեանը ընկնում է  
աթոռի վրայ:) Վիրաւորել ինձ պէս մի կայւածա-  
տիրուհու, նադիօրնի սովեանիկի կհօչը, ու թը  
դասեր մօրք... դէ՛, լաւ, սպասիր: Ես բեղ ցոյց  
կ'տամ: (Վերցնում է բերեկեւը սեղանի վրայից:) Ես քեզ  
ցոյց կ'տամ, դու դժբախտ բանչարեցէն:

ՎԱՐՈՒԽԵԱՆԳԵԱՆ: (Բարձրացնելով ավագը:) Դուքս:

ԿՐԱԿԵԱՆ: Բղաւիր, որքան կուղես: Լաւ  
է, որ կոկորդու լին է: Էսպէս բղաւել ես էլ եմ  
կարսղանում: Աւելի լաւերի հետ եմ դործ ու-  
նեցել, ոչ թէ քեզ պէս մեղքի կաորների: Կաց,  
ես քո զիմին էն օլինը բերեմ, որ դու իմ ձեռ-  
քից Ամերիկա փախէս: Իմացիր, ում հետ դործ

ունես: Ինձ ամբողջ գաւառն է ճանաչում: Իմ  
պատճառով երկու պաշտօնականներ ուրիշ գա-  
ւառ աեղափոխւեցան: Իմ հարազատ ամուսի-  
նըս, հասկանում ես, հարազատ ամուսինս իմ  
ահից երեք օր չարգախում քաղցած ծարաւ  
մնաց, իսկ քեզ, հոտած վարունդ, ոչխարի պողի  
պէս պտուտ կ'տամ. մինչեւ սատկելդ չես մո-  
ռանայ: Ես մեր բժշկապետին էն տեղը հասց-  
րի, որ նա իմ մօտ լեզուն պապանձւած մնաց,  
իսկ դու ինձ դուրս ես անում: Հէնց ի՞նքդ  
դուրս: Հողեմ ես քո զլուխը. դետինը մանխս:  
Քեզի տեսնեմ, որ էնպէս կնկայ ռաստ զաս,  
որ պսակի երբորդ օրը փախչէր և քո մուռ-  
ատ ըռեխն էլ չարդ ու փշուր անէր: Ա՛խ  
դու թթու կազամբ, կծու բողկ... (Երեք անգամ  
թըսում է և արագ դուրս է գնում:)

ՎԱՐՈՒԽԵԱՆԳԵԱՆ: (Ժառլացած նստած է բազմոցի  
վրա:) Ի՞նչ բան էր այս: Եկաւ, հայհոյեց ու զլ-  
նաց: Ա՛խ, ինչու է լուսանում ալդպիսի դրժ-  
բախտ օրը: Ալդ ինչ է—կակազ, այն ինչ է—  
խեազար զոքանչ: Ուշիք: (Զուր է խածում:) Հօր, գրե-  
ցի՞ք... ոչ: Էլ ինչի՞ էք ապա սպասում:

ԿԱԿԱՋԵԱՆ: Թա... թթ... թա-անաբ ը-  
կայ:

ՎԱՐՈՒԽԵԱՆԳԵԱՆ: Ա՛յ, Եկէք, նստեցէք ալս-  
տեղ և զրէք: (Գնում է ձախ:)

**ԿԱԿԱԶԵԱՆ:** Ա.-այնտեղ մնացին իմ ակնո-ոցներս և թուղթը... (Գնում է Մէջտեղից ներս և մտնում Արծիւեանը ճանապարհի հագուստով)

ՏԵՍԻԼ. 5.

ԱՐԾԻԻԵԱՆ ԵՒ ԿԱԿԱԶԵԱՆ:

**ԱՐԾԻԻԵԱՆ:** (Դւս ու դւն նայելով) Դժոնապահը ասաց, որ փաստաբանը տանն է: Ես ամբողջ մարմնովս գողում եմ, խօսել ուզդակի չեմ կարողանում: Ա՛խ, Մարեա, Մարեա, ախր ինչի՞ց, ինչի՞նամար: Բայց ոչ, իմ հետ կատակ անելը լաւ բան չէ: Ես վրէմիսնդիր կինեմ, կլուծեմ վրէմս ինչպէս 0թելլօն: Եթէ նա այլես ինձ չի սիրում, ես էլ չեմ թողնի, որ նա ուրիշին սիրէ: Հետաքրքիր է տեսնել իմ ախոյեանին, այն Դօն-Փուանին, որ խլեց իմ Մարեալիս, իմ պաշտելի Մարեալիս: Ահա ձեզ դաւանանութեան ապացուցը—նրա ուզարկած նամակը Մարեալին: (Հանում է գրանից նամակը և կարդում է:) «Մեծյարդոյ Մարեա Սեմենօվնա, երեկւալ ձեղանից ստացած նամակից, ես իմացայ, որ ձեր ամուսինը շուտով գալու է կալւածքից և ձեղ տանելու է այնտեղ: Այդ պատճառով խնդրում եմ ձեզ, որ վազը ժամը 3-ին գաք ինձ մօտ,

որտեղ մենք վերջնականապէս կվճռենք ապահարզանի գործը, կամ ընդմիշտ կվերջացնենք ձէզ հետ մեր բոլոր հաշիւները: Ձեր խոնարհ ծառայ Պ. Վարունդեան:» Տեսէք ի՞նչ յանդուգին է: Ասում է կամ ապահարզան, կամ բոլոր հաշիւները վերջացնել... ի՞նչ հաշիւներ պիտի լինեն... գուցէ նա ինձ կամենում է: սպանել. այդ դեռ կ'սեսնենք, թէ ով ում գլուխը կ'չարդէ... (Մանում է Կակազեանը ակնոցներով, ծնորն մի թերթ թուղթ. նստում է սեղանի առաջ) Ահա և ինքը— փաստաբանը: Աստւած իմ, ի՞նչ անհօռնի՞ն է. զլիսի վրայինը կարծես մազեր չեն, այլ հնացած թաղիք: Ահա թէ ումով է նա ինձ փխարինել, ում համար է կորցրել խիզքը, պատիւը, պատկառանքը: (Կակազեանը տեսնելով Արծիւեանին գլուխ է տալիս: Արծիւեան կողմէ:) Բարեկի՛ր, դրոզը տանէ քեզ: Եւ զա փաստաբան է: Աս է իմ կնոջս գայթակղեցնողը: 0-, ի՞նչ զգւելի դէմք ունի: Զեմ ասում, թէ ես գեղեցիկ եմ, բայց նրա մօտ, ես կարծում եմ... Սակայն ով կհասկանայ կանանց: (Կակազեանին ծոտենալով, ըսրծը:) Յարգելի պարոն: (Կակազեանը վեր է թռչում:) Ես իւան իվանիչ Արծիւեանն եմ:

**ԿԱԿԱԶԵԱՆ:** (Համարեա չ'կակազելով) Շատ ուրախ-ախ եմ:

ԱՐԾԻԻԵՍՆ: Ես Արծիւեանն եմ, Մարտեալի մարդը:

ԿՈԿԱՋԵՍՆ: Շատ ուրախ եմ:

ԱՐԾԻԻԵՍՆ: Տեսէք ինչ լիրբն է: Դուք կամ չեք կամենում, կամ ձեր լիմարութիւնից ինձ չեք հասկանում: Այդ տեսակ խօսակցութիւնը և ձեռքը ինձ հաճելի չեն: Եւ այն վարմունքի համար, որ դուք ձեղ թոյլ էք արւել, ուրիշ անւան արժանի չեք—բայցի այն, որ դուք մի սրբիալ էք:

ԿՈԿԱՋԵՍՆ: Թու... թու... թութ... թոյլ տւէք...

ԱՐԾԻԻԵՍՆ: Վա, նա մինչև անդամ կակազ է: Փաստաբան—կակազ: Ես բոլորովին չեմ հասկանում կանանց: Ճիշտ է ասել Շեկուպիրը: «Թուլութիւն, ահա քո անունը, ով կի՞ն:» Զե՞, ախր ի՞նչ լաւ բան կայ նրանում: Սա ոչ թէ մարդ է, այլ մի զգւելի կենդանի է: Դուք առաջ մի ձեղ նայեցէք, թէ ինչ կապիկի էք նման, յետոյ ուրիշի բազգի վրայ էլ քար գցեցէք:

ԿՈԿԱՋԵՍՆ: Թու... թութ...

ԱՐԾԻԻԵՍՆ: Լոեցէք, դուք ծակ լեզւանի փաստաբան: Ահա թէ որպիսի փաստաբաններ են Պետերբուրգում: Դէ՛, պարոն Դօն-Ժու-

ան, բարեհաճեցէք ողատմել ինձ, ի՞նչպէս պատահեց այդ բոլորը: Միայն կարծ:

ԿՈԿԱՋԵՍՆ: Ես կոռպիտ մարդկանց հետ չեմ... չը... չեմ խօսում:

ԱՐԾԻԻԵՍՆ: Կոպիտ մարդկանց հետ: Հա՛, հա՛, հա՛: Բայց ի՞նչպէս կ'հրամայէք խօսել մի այնպիսի տավարի հետ, ինչպիսին դուք էք: Զեղ գեռ խեղգելն էլ բաւական չէ: (Բոնում է սրա կոկորդից և խեղգում է:) Զեղ պէտք է շան նման սատկեցնել: (Բաց է թողնում Կակազեանին. նա թուլացած մի քանի բայլ է անում և ընկնում է բաղկաթոսի վրա:) Մեծապատիւ սղարոն, վաղը մենք կ'սատահենք ձեղ հետ, որտեղ կամենաք: Մենք ձեղ հետ կը-մենամարտենք. սակայն, նախազգուշնում եմ, որ ես ատրնանակ բանեցնելու գործում քա-չավարժ եմ: Ասայէք, որտեղ էք կամենում մենամարտել: Դէ՛ պատասխանեցէք, ապա թէ ոչ, ես ինձ համար երաշխաւոր չեմ լինում... (Այսելով Կակազեանին ոտից մինչև գլուխը:) Տեսէք, ի՞նչ-պիսի սիրահար ունի կինս, հազիւ է շունչ քա-շում: Բայց ոչ, սիրելիս, քեզ պէտք է ուշըի բերել: Ես դեռ վրայ բաւական չեմ ժիծազել: (Չուր է ածում սրա վրա:) Ա՛, պարզե՞ց: Օ՛, իմ Ռոմէօ: (Խփում է Կակազեանին.)

ԿՈԿԱՋԵՍՆ: (Ծնկաշոք:) Ինչու էք դու...

դուք ինձ խփում, ե-ես ծեղ ի-ի-ի՞նչ եմ արել:  
Ա.ՐԾԻԻԵԱՆ: Այժմ ի՞նչ կառէք ինձ, պա-  
րոն Վարունգեան:

Կ.Ա.ԿԱՋԵԱՆ: Ե-ես Վարունգեան չեմ, Կա-  
կազեանն եմ:

Ա.ՐԾԻԻԵԱՆ: (Ապշաճ:) Ի՞նչպէս թէ Կա-  
կազեան:

Կ.Ա.ԿԱՋԵԱՆ: Ես եկել եմ տանտիրոջ մօս  
դործով, իսկ դու... ուր ի... ի... ինձ...

Ա.ՐԾԻԻԵԱՆ: Բայց ով է տանտէրը:  
Կ.Ա.ԿԱՋԵԱՆ: Վա-արունգեանը:

Ա.ՐԾԻԻԵԱՆ: Իսկ դուք Վարունգեանը չէք:  
Կ.Ա.ԿԱՋԵԱՆ: Ո-ոչ, Վա-արունգեանը ու-  
րեց է:

Ա.ՐԾԻԻԵԱՆ: Ի՞նչպիսի մարդ է նա:  
Կ.Ա.ԿԱՋԵԱՆ: Այդպէս, ~~արարակակ~~, փոք-  
րիկ բխերով:

Ա.ՐԾԻԻԵԱՆ: Դուք չէք ստում:  
Կ.Ա.ԿԱՋԵԱՆ: Ո-ոչ:

Ա.ՐԾԻԻԵԱՆ: Բայց ինչու ինձ իսկոյն չա-  
սացիք:

Կ.Ա.ԿԱՋԵԱՆ: Դու... ուր ինձ չիք թող-  
նում խօսելու:

Ա.ՐԾԻԻԵԱՆ: Այո, ճշմարիտ է, ես տա-  
քացայ:

Կ.Ա.ԿԱՋԵԱՆ: Մինչև անգամ սա-արսա-  
փելի:

Ա.ՐԾԻԻԵԱՆ: Դէ՛ ներեցէք ի սէր Աս-  
տուծոյ: Ես կարծեցի, թէ Վարունգեանը դուք  
էք: Դուք այնպէս հպարտ նստած էիք սեղա-  
նի առաջ, որ ես ծեղ տանտիրոջ փոխարէն  
ընդունեցի: Իհարկ է, ես պատրաստ եմ տալ  
ծեղ ծեր ցանկացած բաւարարութիւնը: (Կողմ.)  
Իսկապէս, չէ՞ որ կակազը փաստաբան լինել  
չի կարող: (Աչեց երեսում է Գրիգորը)

ՏԵՍԻԼ 6.

ՆՈՅՆՔ) ԵՒ ԳՐԻԳՈՐ:

Ա.ՐԾԻԻԵԱՆ: (Տեսանուով Գրիգորին): Ա-... ա-...  
ահա նա՛ Փրակ հազար, փոքրիկ բեխերով: Ե-  
րեխ ուղիղ դատարանիցն է գալիս:

ԳՐԻԳՈՐ: Զեղ ով է հարկաւոր:  
Ա.ՐԾԻԻԵԱՆ: Դուք, «փոքրիկ բեխերով  
պարոն:»

ԳՐԻԳՈՐ: Ի՞նչ էք հրամայում:  
Ա.ՐԾԻԻԵԱՆ: Ա- սա գէռ ոչինչ—չահէլ  
է և մարդու է նմանում, երբ նա... (Հեգնորէն.)  
Խնդրէմ, նստեցէ՛ք:

ԳՐԻԳՈՐ: Շնորհակալութիւն, ես կարող  
եմ և կանգնած մնալ...

Ա.ՐԾԻՒԵԱՆ: Ինչու կանգնած, մենք ձեզ  
հետ նստած կը խօսենք:

ԳՐԻԳՈՐ: Ներողութիւն, ես չեմ կարող...

Ա.ՐԾԻՒԵԱՆ: Նստեցէք, ասում եմ ձեզ:  
(Ուժով նստեցնում է նրան բազմոցի վրա) Այժմ ես կա-  
սեմ ձեզ, թէ ով եմ ես: Ես իվան իվանիչ Ար-  
ծիւեանն եմ. հասկացա՞ք:

ԳՐԻԳՈՐ: Հասկացայ:

Ա.ՐԾԻՒԵԱՆ: Ի՞նչ հասկացաք:

ԳՐԻԳՈՐ: Իվան իվանիչ Արծիւեան:

Ա.ՐԾԻՒԵԱՆ: Յետո՞յ:

ԳՐԻԳՈՐ: Յետոյ ոչինչ չփիտեմ:

Ա.ՐԾԻՒԵԱՆ: Չդիտէք: Իսկ ուրիշի բաղ-  
դր փշրել զիտէ՞ք:

ԳՐԻԳՈՐ: Պայմոն, ի սէր Աստուծոյ, ես  
ոչինչ չեմ փշրել, իսկ եթէ մի բան փշրեմ էր,  
ես իմ ռոճիկից եմ վճարում: (Ուզում է զնալ)

Ա.ՐԾԻՒԵԱՆ: Ոչ, դուք այստեղից չեք  
դնալ... վճարել... ի՞նչ Վարունդեան է՞: Բայց  
միթէ դրա փոխարէն կարելի է վճարել, հ՞ը: Զեղ եմ հարցնում, կարելի՞ է: (Ուստեամբ է գրի-  
դորին):

ԳՐԻԳՈՐ: Պայմոն, դուք ի՞նք էք կամե-  
նում:

Ա.ՐԾԻՒԵԱՆ: (Քանեւով ասորհանակը) Ա՞յս, ինչ  
եմ կամենում. իրել այդ գնդակը քո լիմար  
հակատիդ մէջ. հասկացա՞ք: Ժամը և տեղը նը-  
շանակիր, անպիտան: (Մտնում է Մարեա Սեմենովնան)

ՏԵՍԻԼ, 7.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԵԱ:

ՄԱՐԵԱ: (Ցեսեւով իւր ամուսնուն) Ա՞յս, ա-  
մուսինու:

Ա.ՐԾԻՒԵԱՆ: (Նայեւով ժամացոցին) Երեք ժա-  
մըն է. Ֆիշտ ժամանակն է:

ՄԱՐԵԱ: Այդ գուռ ես, Վանեա, այդ ի՞նչ-  
պէս, և ինչու դու այստեղ ես եկել: (Ուստեամբ  
է նրան, որ համբուրելու)

Ա.ՐԾԻՒԵԱՆ: Հեռու. Նրան համբուրէք,  
և ոչ թէ ինձ: (Մատնացոյց է անում գրիգորին)

ՄԱՐԵԱ: Այդ ի՞նչ է նշանակում, ի՞նչ  
պատահեց քեզ հետ:

Ա.ՐԾԻՒԵԱՆ: Այդ նշանակում է, որ ես  
բոլորը գիտեմ: Հիմա նրա հետ համբուրէք:

ԳՐԻԳՈՐ: Համբուրւենք, խանում, Աստ-  
ած վկայ ոչինչ, ես չեմ վիրաւորուի, թէ չէ  
նա ինձ կոպանէ:

ՄԱՐԵԱ: Վանեա, այդ ի՞նչե՞ր ես իս-

սում... նա խելագարւել է... խնդրում եմ, ձեզ զանից մէկը գնացէք բժշկի յետելից: Վանեա, սիրելիս, գնանք տուն... դու տկար ես, ճանապարհից յոդնել ես: Ես ինքս կերթամ բժշկի յետելից: (Ուզում է գնար)

ԱՐԾԻԻԵՍՆ: (Բունում է Մարիամի ձեռից և չու քացնում է նրան) Ես տուն չունիմ... Ա՛յ, այս գարշելին ինձ կողոպահեց... (Յցց և տալս Գրիգորին)

ԳՐԻԳՈՐ: (Ծնկաշրբ) Զերդ՝ զերազանցութիւն, հաւատացէք, որ ոչինչ չեմ գովացէլ: Թէ մի բան կոտրել եմ, այդ, իհարկէ, կարող է պատահած լինել, բայց գողովթիւն չեմ արել, թէ կուղ տիրոջից հարցըէք: (Չեռքի նշանով հասկացնում է կակազեանին, որ նա չոք: Կակազեանը չուում է և անհկատելի կերպով թագնում է բազկաթուի յետեւում)

ԱՐԾԻԻԵՍՆ: Օ՛, Ասուած իմ, ի՞նչ խալտառակութիւն... ահա Ռօմէօ և Զուլետաան: Դէ՛, ի՞նչ էք սպասում, զւարձացէք վիրշին անգամ, համբուրւէք: Այդ էր իմ սիրոյս վարձատրութիւնը... Հը, էլ ի՞նչ էք սպասում, համբուրւէք, ես ձեզ հրամայում եմ:

ՄԱՐԵՍ: Վանեա, ուշքի եկ, այդ ի՞նչ ես ասում:

ԱՐԾԻԻԵՍՆ: Համբուրւէք: (Հանում է ասոր-

հանակը) Դուք, «փոքրիկ բեխերով պարոն», համբուրւէք կնոշս:

ԳՐԻԳՈՐ: (Ծնկաշրբ ճօտենում է Մարիամին) Տիկին, թողլ տուէք համբուրւէլու:

ԱՐԾԻԻԵՍՆ: Եւ նա գեռ հարցնում է... համբուրւէրի՛ր, էլի՛: (Գրիգորը համբուրւէն է Մարիամ լուիս է) Բոլորը վերցացաւ: Էլ ոչ մի կասկածելու տեղ չ'կայ: Սակայն, մի՛ մոռանաք, որ դա ամենավերջին, և ամենասարսափելի համբուրն էք: Օ՛, Ասուած իմ, Ասուած իմ: (Լալս է նրան հետեւում են մնացեալները)

ՏԵՍԻԼ 8.

ՆՈՅՆՔ ԵՒ ՎԱՐՈՒԻՆԳԵՍՆ:

ՎԱՐՈՒԻՆԳԵՍՆ: (Մանելով) Այդ ի՞նչ է, ի՞նչ զալմաղալ է, ովք էք դուք և ի՞նչ էք ուղում:

ԱՐԾԻԻԵՍՆ: Զեզ ի՞նչ գործ. գո՞ւք ովք էք:

ՎԱՐՈՒԻՆԳԵՍՆ: Ինչպէս թէ ով... ես երդւեալ հաւատարձատար Պավել իշանիչ Վարունդեանն եմ:

ԱՐԾԻԻԵՍՆ: Ինչպէս թէ Վարունդեան... հապա սա՞ ովք է:

ՎԱՐՈՒԻՆԳԵՍՆ: Սա իմ սպասաւորս է:

ԱՐԾԻԻԵԱՆ: Ի՞նչպէս է նրա աղզը:  
ԳՐԻԳՈՐ: Կօշիկեան: Միաբն լու իմա-  
յէք, որ ես այդ բանը անհետեանք չեմ թողնի:

ԱՐԾԻԻԵԱՆ: Դարձեալ լիմարացալ: Այս  
ի՞նչ ձախորդ օր է:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Վարեային) Դժուք էլ այս-  
տեղ էք: (Բարձրացնում է սրան) Ինչո՞ւ էք դուք չո-  
քած: Ներողութիւն. ձեր մէջ, կարձեմ, մի  
թիւրիմացութիւն է եղել: Նստեցէք. (Արձւեա-  
նին) Յարգելի պարոն, դուք ի՞նչ էք կամենում  
այստեղ:

ՄԱՐԵԱ: Պարոն Վարունգեան, թոյ տր-  
ւեք ինձ ներկայացնել ձեզ իմ ամուսնուն:  
ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: (Զարձացած) Ձեր ամուսի՞-  
նը: Շատ ուրախ եմ: (Վառենում է և ծեռը և տալիս) ԱՐԾԻԻԵԱՆ: Ես ազնիւ մարգեանց եմ միայն  
ձեռք տալիս և ոչ թէ ձեզ պէս կեղտոանե-  
րին...

ԳՐԻԳՈՐ: (Կողմ) Ի՞նչ է սա բոլորին հայ-  
կոյում: Զէ, սրա վերնատունը դասարկ է:

ԱՐԾԻԻԵԱՆ: (Հանում է գրանից նամակը) Այս  
դժուք էք գրել իմ կնոջը, այ՞ո՞:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Կատարելապէս նիշտ է.  
բայց ես այստեղ վիրաւորական ձեր ամուսնու  
համար ոչինչ չեմ տեսնում:

ԱՐԾԻԻԵԱՆ: Դուք երեք ժամին նրա-  
հեա տեսակցութիւն էք նշանակել. նա էլ  
եկել է. հետեապէս բռնւած է նա իւր յան-  
ցանքի տեղում:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ի՞նչ յանցանք կայ այս-  
տեղ: Այդ իմ ընդունելութիւն ժամերն են: Ես  
նրա ընկերուհու գործն եմ տաճում, այդ պատ-  
ճառով կանչեցի տեղեկութիւններ ստանալու:  
ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ի՞նչ գործ:

ՄԱՐԵԱ: Լսի՛ր, Վանեա, դու մի բան  
խննել ես, որովհետեւ ոչինչ չգիտես: Հանդրս-  
տացի՛ր, ի սէր Աստուծոյ: Բանը նրանումն է,  
որ Պետրոսովանց Սօնէն ուղում է մարդուց  
բաժանւել և այդ պատճառով նա ինձ խրնդ-  
րեց, որ ես գնամ փաստաբանի մօտ և վկա-  
յութիւններ տամ: Ես նրա խնդիրքը կատա-  
րեցի, այնպէս որ բոլոր նրանից առած տեղե-  
կութիւնները հաղորդեցի պարոն Վարունգեա-  
նին: Այսօր պարոն Վարունգեանի հրաւերով  
ես եկայ այստեղ վերջին անդամ, որովհետեւ բո-  
լոր մնացեալ հոգացօղութիւնները Սօնի մայրն  
է իւր վերայ վերցրել, որը պէտք է այսօր այս  
տեղ լինէր:

ԱՐԾԻԻԵԱՆ: Ո՞ւտ է այդ լողորը: (Մը-  
նում է կրակեանը):

ՏԵՍԻԼ 9.

ՆՈՅՆՔ ԻՒ ԾԱՂԻԿ ԿՐԱԿԵԱՆ:

ԿՐԱԿԵԱՆ: Առաւած իմ, այս ի՞նչ բարձութիւն է:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Դարձեալ եկաւ այդ զորանշը:

ԿՐԱԿԵԱՆ: Մարեա ջան, իվան, իվանիչ...  
(Արագ շրջելով համբուրում է նրանց և առապարհին թիջ և ճը-  
նում որ զրկէ վարունգեանին, բաց ցեսոց յանկած ցնցում է  
և թքելով զգւանք է արտացայտում) Դուռք ինչու էր ե-  
կել այս տեղ:

ԱՐԾԻՒԵԱՆ: Ընտանեկան գործերով:

ԿՐԱԿԵԱՆ: Ես էլ նոյնպէս: Ուզում եմ  
Սօնեալիս մարզուց բաժանել, և բանը շուտ  
վերշայնելու համար, վերկացայ և եկայ այս-  
տեղ: Առաջ, այս, Մարիան էր էղ բանի հոգս  
բաշողը, բայց ստացած նամակներիցս իմացայ,  
որ նա գործի մասին հասկացողութիւն չունի:  
Մեր վարձած փաստաբանն էլ, խօ, տխմար-  
ների մինչ է, ոչինչ չի հասկանում. ի զուր չէ,  
որ զրա աղքանունը կանաչեղէնիցն է շինած:  
Խակ ես, Մարեա, արդէն այստեղ մէկ անդամ  
եղել եմ, և յետոյ զնացի ծեր տուն: Այնակո  
ինձ ասացին, որ դու բազար ես զնացել, իսկ  
յետոյ այստեղ... (Արձիւեանին) և ծեր դիւզից

զալն էլ իմացայ Ասացին, որ դուք մի ինչ որ  
նամակ վերցրած գուրս եկաք:

ԱՐԾԻՒԵԱՆ: Հէնց այդ նամակն էր, որ  
ինձ խելքից հանեց: Ա՛խ, որքան ես լիմարա-  
ցայ. կնոշա սախպեցի ծառացի հետ համբուր-  
ւել:

ԳՐԻՖԱԲ: Համբուրւելը ինձ համար ոչինչ  
չ'արժէ: Լաւն այն է, որ անխաթայ պրծայ  
ձեւանից:

ԱՐԾԻՒԵԱՆ: Դէ ների՛ր, սիրելիս: Պարոն  
Վարունգեան, ներողութիւն եմ խնդրում ձե-  
զանից իմ վարձունքիս համար:

ԿԱԿԱՋԵԱՆ: (Բազկաթոռի յետելից:) Հի-իմա  
ե-ես էլ կարող եմ վեր կենալ:

ԲՈՂՈՐԾ: Այս ով է:

ԿԱԿԱՋԵԱՆ: (Դուրսէ գալիս բազկաթոռի յետելից:)  
Թութ... թոյլ աւէր ինձ հե-եռանալ:

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Գնացէ՛ր, ի սէր Աս-  
տուծոյ, ես մինչեւ անդամ չպիտեմ էլ, թէ  
դուք ինչու էր եկել:

ԿԱԿԱՋԵԱՆ: Ես ե-ե-եկել էի բժշկւելու  
կա... կը... կա... կա...

ՎԱՐՈՒՆԳԵԱՆ: Բժշկւելու: Բայց ես բը-  
միշէ չեմ, այլ փաստաբան եմ:

ԿԱԿԱՋԵԱՆ: Ի... ինչպէս թէ բը... բժշկւ  
չէք:

ՎԱՐՈՒԽԳԵԱՆ: Կակաղների բժիշկ Վա-  
րուճգեանը, իրաւէ, այստեղ է կենում, միայն  
նրա տան մուտքը հիտեեալ սանդուխըներն  
են: Նա կենում է համար հինգերորդ լնակա-  
րանում:

ԿՈԿՈԶԵԱՆ: Հապա էլ ինչո՞ւ ինձ ա...  
այստեղ ա... ամբողջ օրը չա... արչարեցին,  
ծե... եղին, վե... երաս ծու... ուը ածեցին...

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: Ես կարծեցի, թէ դուք  
բաժանում էք:

ԿՐԱԿԵՄՆ: (Կակազն: ) Բայց թուլ տուեք  
հարցնել, զուք ամսութի՞ էք:

ԿՈԿԱԶԵԱՆ. Ա... այս

## ԿՐԱԿԵԱՆ: Ամուսնանալ ուղղում էք:

ԿԱԿՈԶԵԱՆ: Ու... ու... ուրա... ախու-  
թեամբ...

ԳՐԻԳՈՐԻ: (Ցոյց առաջին կրտքեալին) ԱՌ, պատհ  
հետ ևս չէի համբուրուի:

ԿՐԱԿԵՈՒՆ: (Կակաղին: ) ԳԱԱՆՔ մեր տուն,  
ևս ութը աղջիկ ունեմ, որին քէֆդ կ'առայ,  
բնարի՛ր:

ՎԱՐՈՒԻՆԳԵԱՆ: ԱՇ Լաւ փեսալի: (ԱԺԵԿԱՔ  
Ճիճաղում են:)

ԿՐԱԿԵԱՆ: Ծիծաղելու բան չ'կայ; Նրանից վատ ամուսիններ են լինում: Իսկ ես գո-

կելու կարիք չունեմ: Յ'աեսութիւն, պարո-  
նալիք: Յ'աեսութիւն, պարոն բանշարեցէն:

ՎԱՐՈՒԽԳԵԱՆ: Դարձեալ բանջարեղէն:

Գրիգոր: (Աքանիւսանին) Պարոն, Էլ չէք  
հրամայում համբուրել:

Ա. Ա. ԾԻՒԵՑ. Ներողութիւն. բայց շատ  
չի լինի... ի՞նձ ինչ է եղել: (Համբուրում է կնոջը.  
բալորը գնում են:)

ԳՐԻԳՈՐ: Խակ ես կարծեցի, թէ արդէն  
բաժանւել են:

ՎԵՐՈՒԽԳԵԱՆՑ: (Բնակում է բազկաթուուի վերացի) Դեռ շատ երկար տարիներ կը լիշեմ ես այդ օրը:

## ՎԱՐԱԳՈՅՔ





ՀՀ Ազգային գրադարան



NL0310799

806

11.563

